Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 32 — ՈՒՐԲԱԹ 10 ՓԵՏՐՈՒԱՐ 1884 (Ն. Տ.) 22 ՓԵՏՐՈՒԱՐ — 25 ՐԷՊԻԼ ԱԼԹՔՐ 1301

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

40 ՓԱՐԱ — 40 ՓԱՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՅՄԱՆ

Մանուկման տողը մէկ անգամի համար 3 դրամ, երկու անգամի համար 2 դրամ և աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կրնայ։

Օրագրոյս վերաբերեալ Նամակ կամ որ եւ իցէ զրուցիւն պէտք է ուղղել

«Ս. Խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ Ղալաթիա, Իզմիրլի օղլու խան, թ. 19։

Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէին՝

ازمیرلی اوغلی خانی ۱۹ نومره‌لی درغلره‌ده

غزته‌سی اداره‌سینه (Մամուր)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար	Տարեկան դրամեկան արժէք		200
« «	Վեցամսեայ	« «	100
« «	Եռամսեայ	« «	50
« «	Մէկ ամսեայ	« «	20
« «	Հատուկ	« «	1
Գաւառաց համար	Տարեկան	« «	240
« «	Վեցամսեայ	« «	120
« «	Եռամսեայ	« «	60
Օտար երկիրներ	Տարեկան	Ֆրանք	56
» «	Վեցամսեայ	«	28

Դուրս դրկուած լրագրաց համար 'ծախքը Խմբագրութեան վրայ է։

Կ. ՊՈԼԻՍ
ՈՒՐԲԱԹ 10 ՓԵՏՐՈՒԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երէկ Համսի և Ռիզդէրի հեռագրեր մեզ ծանուցին վերջապէս այն երկար և կարեւոր վիճաբանութեան արդիւնքն, որով երկու շաբաթէ հետէ կը զբաղէր Անգլիոյ Ներսէսիանաց Ժողովը։ Սրը Սդաֆորտ Նորթքոթի պարտականաց առաջարկը Պ. Կլատստոնի Նախարարութեան Եգիպտական աշխարհավարութեան դէմ՝ մերժուեցաւ 311 քուէով ընդդէմ 262 քուէի, որով Նախարարութիւնը չահեցաւ 49 քուէի մեծամասնութիւն։ Ինչպէս երէկ փութացինք դիտել, այս թիւերը գուշակել կուտան մեզ թէ քանի մը Ազատականներ, ինչպէս նաեւ Իռլանտայի Երեսփոխանք, Պահպանողականաց հետ քուէարկած են, և ուրիշ քանի մը Ազատականներ ձեռնպահ մնացած են։ Վիճաբանութեանց այս արդիւնքը, թէեւ յոյժ կարեւոր, ամենեւին անակնկալ չէր Աբերդինի ընթերցողաց համար։ Մեք իբր 10 օր առաջ, փետր. 1 թուով, «Անգլիական Խորհրդարան» վերնագրով Քաղաքական Տեսութեան մը մէջ, յայտնած էինք մեր հաստատ համոզումը թէ Ընդդիմադիր կուսակցութեան յարուցած վիճաբանութիւնն, ինչպէս նաեւ երկրին այլ և այլ կողմերը տեղի ունեցած հանրաժողովական գրգռիչները, կրնային հարկադրել Պ. Կլատստոնի Նախարարութիւնն իւր Եգիպտական աշխարհավարութիւնը փոփոխելու և առաւել շէշտելու, բայց ամենեւին հաւանականութեան հակառակ էր կարծել թէ Պ. Կլատստոնի Նախարարութիւնը տապալելու արդիւնքն ալ կրնային ունենալ։ Մեք այդ յօդուածը գրեր էինք իբրեւ անուղղակի պատասխան մը մեր քանի մը բնիկ և եւրոպացի պաշտօնակցաց, որք Խորհրդարանին մէջ և արտաքոյ Խորհրդարանին եղած ցոյցերը տեսնելով, սկսած էին իրենց ընթերցողները պատրաստել Ազատականներու Նախարարութեան անկման մասուն լրոյն։ Մեք մարդաբնական ոգի կրած լինելու յատկութիւնը չունինք. մեր խոնարհ կարծիքն հիմնեալ էր ինչ ինչ քաղաքական և խորհրդարանական հաշիւներու վրայ, զորս ատ կրնայ հարկաւոր չէ, և որք լիովին ստուգուեցան երէկի հեռագրերով։

Քուէարկութեան արդիւնքը նոր յոյժ պիտի տայ Պ. Կլատստոնի Նախարարութեան՝ յառաջ տանելու իւր աշխարհավարութիւնն, որ այժմ քսան կարի բացայայտ է։ Դատուած են Ազատական Երեսփոխաններ որք դատապարտած են Նախարարութեան մինչեւ մեռ ժամանակներս հետեւած Եգիպտական աշխարհավարութիւնը, բայց չեն ուզած հաստատել Սրը Սդաֆորտ Նորթքոթի պարտականաց առաջարկն, որոյ արդիւնքը պիտի լիներ տկարացնել Նախարարութեան դիրքն և չիրթութեան նոր տարր մ'եւս մուծանել արդի չիրթ կացութեան մէջ։ Մեք ալ պարտաւած ենք զայդ աշխարհավարութիւն իբրեւ վարանոտ, որովհետեւ ամեն տարակոյսէ վեր է այսօր որ եթէ անգլիական Նախարարութիւնը փոքր ինչ ազդու ընթացք մը բռնէր Սուտանի դէպքերուն նկատմամբ, նորանոր աղէտից առաջքը կառնուէր։ Այս ամբաստանութեան դէմ Պ. Կլատստոն ինքզինք կը պաշտպանէ այնպիսի առարկութեամբ մը, որ գոհութիւն միայն կրնայ պատճառել Թուրքիոյ, ցոյց տալով թէ Մեծն Բրիտանիան Եգիպտոսի մէջ այնչափ շահախնդիր ընթացք մը չբռներ որչափ սովորաբար կը կարծուի։ Նա կ'ըսէ թէ Անգլիա իրաւունք չունէր Սուտանի կողմը միջամտելու, թէ Եգիպտոսի մասին Եւրոպայէն ստացած իշխանութիւնն այնչափ ընդարձակ չէր որ՝ ապագայ դիպաց ի նախազգուշութիւն՝ կանխաւ զօրք ղրկէր Նեղոսի կամ Կարմիր ծովու եզերքը, և թէ զինուորական միջամտութիւնն ալ զոր այժմ կը պարտաւորի ընել դէպքերու բերմամբ, արիւնհեղութեանց կրկնումն արգիլելու նպատակը միայն ունի։

Երէկի թղթաբերին մեզ բերած լուրերն, որոյմէ քաղուած մը երէկ իսկ տուինք, կը ցուցնեն թէ յոյս կայ որ անգլիական կառավարութեան այս յոյն իրականութիւն գտնէ։ Կորոն զօրավարին ողջմէ Խարդում ժամանումը կը ստուգուի, և զօրավարին իւր յուսալից կերպիւ կը հեռագրէ իւր պաշտօնին հաւանական յաջողութեան նկատմամբ։ Թօքարի կողմէ կարելի է որ ապստամբք նոր խըժդժութիւններ գործեն, կամ սնգլիական զօրաց հետ չափուին, բայց այս ալ իւր տեսակի մէջ վերջին դէպքը պիտի լինի թերեւս, նկատելով թէ Անգլիոյ ուղղակի միջամտութեան լուրն արդէն երկիւղ ազդած է Սուտանի ապստամբաց։

Այսպէս, եթէ անակնկալ դէպքեր վրայ չհասնին, և չիանգարեն այս լաւատեսական հաշիւներն, ուրախ ենք յայտարարելու թէ Եգիպտոսի կողմն իրաց վիճակն առաջուան չափ յուսահատական չէ այժմ։

ԵԳԻՊՏՈՍ

Գահիրէէն կը հեռագրեն Անգլ. Օպզերվէր լրագրին թէ խումբ մը զօրքեր փետրուար 17 ին Ապտիի պալատը ներկայացան աղերսագիր մը մատուցանելու համար Խեդիվին, որով կը բողոքեն Եգիպտական զօրաց Սուտան զրկուելուն դէմ, և կը խնդրեն որ Եգիպտական ծառայութեան մէջ գտնուող անգլիացի սպայք ճամբուին, իբր օտարներ ազգաւ և կրօնիւ։ Այն ցոյցին վրայ Անգլիացի Ուտ զօրավարն անմիջապէս Խեդիվին պալատը կոչուեցաւ։ Ապստամբք յայտարարեցին նոյն թէ ամբողջ Եգիպտական բանակին զգայմանց թարգման կը հանդիսանային։ Ուտ զօրավարն ձերբակալել տուաւ զանոնք, և շղթայակապ բանտ ղրկեց։

Գահիրէի մէջ կը կարծուի թէ Եգիպտական բանակին մէջ ծառայող Անգլիացի սպայք հրաժարական պիտի տան՝ Թօքարի ապստամբն հանար ղրկուած բանակին վերադարձէն յետոյ։ Սուտան ղրկուելիք Անգլիական բանակին հրամանատարաց ընտրութիւնը դժկամակութիւն պատճառեց դրաւոր Անգլ. բանակին սպայից։ Այս վերջինք կը մտածեն թէ Եգիպտական պատերազմին մէջ ծառայելու համար մասնաւորապէս իրենք ընտրուած լինելով, սոյն ընտրութիւն երաւունք կուտար իրենց՝ արդի պարագայից մէջ ևս ծառայելու։

Կորոն զօրավարն, որ փետրուար 18 ին Խարդում կ'սպասուէր, Քօէդլկոն գնդապետն Սուտանի ընդհանուր կառավարիչ կարգեց, փաշայութեան տիտղոս տալով նմա։

Սուաքիմէն Թոյշի զարնուած հեռագիր մը կը ծանուցնէ թէ ապստամբաց կառելի երեսը տեսայ, իմ բոլոր սրտմտութիւնը, իմ բոլոր կրքերը փչրվեցան, խորտակվեցան այդ խորհրդաւոր մարդու կախարդիչ զօրութեան առջեւ...։ Զը գիտեմ ինչի՞ն պէտք էր վերարերել այդ փոփոխութիւնը, արդեօք իմ պատանեկական ընտանութեան թուլութեանը, թէ իմ կամքի ահռետատութեանը...։

Բայց ես այնքան քաջութիւն ունեցայ, որ պահանջեցի առանձնութեան մէջ խօսել նրա հետ։

— Ես էլ դրա համար հեռացրի քո մօրը, ասաց նա մեղմութեամբ և նստեց իմ մօտ։

— Մուրադ, շարունակեցէ՛ նա, առանց թոյլ տալու, որ ես խօսեմ։ — Դու ցանկացար ինձ հետ առանձին խօսել. հասկացայ քո միտքը և դրա համար գովում եմ քո խելացութիւնը։ Բայց առանց քո խօսքերը լսելու, ես գիտեմ, թէ դու ի՞նչ պիտի ասես ինձ։ Դու պիտի ասես, քաւոր Պետրոս, այն բանալին, որ ես չինեցի քեզ համար, նրանով կատարվել է մի մեծ չարագործութիւն, գողացվել են թանգագին իրեղէններ, եւ որպէս յանցաւոր, բռնվել են եւ պատժվում են անմեղ մարդիկ։ Դու պիտի ասես, քաւոր Պետրոս, բանալին քո ձեռքումն էր գտնվում, ուրեմն, թէ կանգածանքը և թէ պատասխանատուութիւնը քեզ վրա է ընկնում։ Դու այնքան ազնիւ ես և բարեսիրտ, որ կը պահանջես ինձանից, որ ես անպատճառ պատասխանատուութիւնը ինձ վրա առնեմ և ազատեմ անմեղ մարդիկներին դատաստանի բարբարոսութիւններից։ Իսկ եթէ ես չը լսեմ քեզ, դու այնքան անաչառ կը լինես, որ չես թագցնի չարագործութիւնը, կը դիմես որսել հարկն է, կը մատնես ինձ, եւ կը յայտնես բանալիի ամբողջ պատմութիւնը...։

— Կարծեմ, ես նախագուշակեցի բոլորը, ինչ որ դու մտքումդ դրած ունէիր, այդպէս չէ՞։

— Ուղիղ այդպէս է։

— Սիրում եմ քո անկեղծութիւնը և ուրախանում եմ քո հշմարտախօսութեան վրա։ Ես էլ, եթէ քո տեղը լինէի, այսպէս կը վարվէի. ես էլ թոյլ չէի տալ, որ չարագործութիւնը ծածկվէր, իսկ անմեղութիւնը նրա փոխարէն պատժվեր։

Ես չը կարողացայ իմ վրդովմունքը զսպել։

— Ուրեմն ի՞նչու թոյլ տուեցիք, որ անմեղութիւնը պատժվի։ Մինչեւ այսօր ի՞նչ բանի էիք սպասում, որ ծածկեցիք չարագործութիւնը։ Միթէ ձեր պատճառով չէ՞ր, որ դժբախտ վարպետիս ամբողջ արհեստանոցը, կայքը, կալուածները և բոլորը, ինչ որ ունէր, աճուրդով վաճառեցին, ու նրա ողորմելի ընտանիքը օրական հացի կարօտ թողեցին։ Միթէ ձեր պատճառով չէ՞ր, որ խեղճ վարպետիս բանտի մէջ մաշեցին, իսկ հիմա, գուցէ այս րոպէիս, դատապարտեալների հրապարակի վրա, գահիճը կարում է նրա ձեռքը։ Ինչու թողեցիք, որ այդ բոլոր բարբարոսութիւնները կատարվեին, եթէ դուք խիղճ ունէիք, եթէ ձեր սրտումը Աստուծոյ երկիւղը կար, եթէ դուք յարգում էիք արդարութիւնը։ Իսկ այժմ, երբ բանը բանից անցել է, նոր եկել եք, ու իմ գլխին քարոզներ էք կարդում։

Նա պատասխանեց, պահպանելով իր սառնասրտութիւնը։

— Իրաւացի եմ համարում քո մանկական սրտի բարկութիւնը, չա՛տ իրաւացի։ Դա մի լաւ նշան է, որ դու բարոյապէս փչացած տղայ չես։ Բայց լսի՛ր, Մուրադ, լսի՛ր ցաւալի իրողութիւնը։

Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ նրա զօրաւոր ձայնը սկսեց դողդողալ և աչքերումը յայտնվեցաւ արտասուք։

— Այն խիթալի բանալին, որ դու շինեցիր ինձ համար, ես պահում էի իմ մօտ, իբրև մի անմոռանալի յիշատակ, որ հայրը կարող է ունենալ տիրոջի որդուց։ Դա քո ձեռքի առաջին գործն էր և այդ պատճառով ինձ համար թանգագին էր։ Բայց երևում է, որ Աստուած կամեցել էր ինձ պատժել հէնց այն բանով, որը իմ սրտին շատ մօտ էր։ Ցանկարծ բանալին անյայտացաւ։ Ո՛վ տարաւ, ո՞րտեղ կորաւ, — մինչև այսօր մտածումեմ, մտածում ոչինչով բացատրել չեմ կարողանում։ Նրա կորուստից մի շաբաթ յետոյ կատարվեցաւ քեզ յայտնի չարագործութիւնը։ Այն օրից ես ամէն տեղ մեն էի գնում, ամէն տեսակ հարցուփորձ գործ էի գնում, գուցէ մի հնարքով կարողանամ երևան հանել կատարված եղելութեան գաղտնիքը։ Բայց իմ բոլոր ջանքերը անցան ապարդիւն։ Այժմ ես մղջրված եմ տարակուսութիւնների մէջ. մոատանջութիւնը խեղդում է ինձ. չը գիտեմ, թէ ի՞նչպիսի անեմ, չը գիտեմ, թէ ինչո՞վ կարող եմ քաւել այն յանցանքը, որ ինքս չեմ գործել, այլ իմ միամտութեան պատճառով կատարվել է...։

ԲԱՅԾԻ

(Շարունակելի)

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ
12

ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐԿԻՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ

Մայրս սարսափեց, երբ լսեց իմ վերջին խօսքերը, բայց կանգնած մարդը հանգստացրեց նրան, ասելով.

— Խեղճ տղան երազների մէջ է խօսում։

Երբ ուղիղ նայեցի այդ մարդու երեսին, տեսայ, որ նա մեր քաւոր Պետրոսն էր։ Նրա երևոյթը ինձ բոլորվին սթափեցրեց իմ անբնական զառանցութիւններից։ Ես այժմ գանվում էի կատարեալ արթնութեան մէջ, բայց դարձեալ կրկնեցի նոյն խօսքը, որ ասել էի երազիս մէջ.

— Այո՛, ես եմ չինել այն բանալին...

Զը գիտեմ քաւոր Պետրոսը ի՞նչ ասաց, ի՞նչ ակնարկութիւն արեց դէպի իմ մայրը, միայն այսքանը տեսայ, որ նա հեռացաւ իմ քնարանից, ես և քաւոր Պետրոսը մնացինք միայնակ։

Ես զգում էի ինձ բաւական լաւ գլխս ցաւը անցել էր. մարմնիս ջերմութիւնը մեղմացել էր, միայն անդամներիս մէջ տիրում էր մի տեսակ յոգնածութիւն, մի տեսակ թուլութիւն։ Այսու ամենայնիւ, ես վերկացայ անկողնից և հագնվեցայ։ Քաւոր Պետրոսը օգնեց ինձ լուացվելու։ Մառն ջուրը բաւական զովացրեց իմ գլուխը, բաւական կաղդուրեց իմ բորբոքված ուղեղը։

Մարդկային բնաւորութեան մէջ երբեմն կատարվում են այնպիսի հոգեբանական փոփոխութիւններ, որ շատ դժուար է լինում բացատրել։ Կան մարդիկ, որոնց վրա որքան և զայրացած լինես, որքան և նախապատրաստված լինես նրանց յանդիմանելու, անարգելու և մինչեւ անգամ սպանելու, բայց հէնց որ նրանց երեսը տեսնում ես, իսկոյն, կարծես թէ մի մոգական ազդեցութեամբ, քո սրտի եռ հոգու նախկին լարված տրամադրութիւնը թուլանում է, բարկութեան խստութիւնը մեղմանում է, և դու ընկնում ես կատարեալ սառնասրտութեան մէջ. նոյն ազդեցութիւնը գործեց ինձ վրա եւ քաւոր Պետրոսը։

Ես նրա դէմ զայրացած էի. ես մահուանչափ ատում էի այդ դարշելի մարդուն, ես վճռել էի վարվել նրա հետ վրէժխնդրութեան բոլոր բարբարոսութեամբ, — բայց հէնց որ նրա պատ-

---

կուութիւնը ծածկել ցնցոտիմ վրան ունենալով։

դաղամին հոգմացոյցն էր։ Առանց այլ եւս տարակուսելու՝ առի տարճանակ-

ուածել սկսայ։ Այս անակնկալ ծեծը զարհուրեցուցիչ [illegible] մեռ, և առաւել ա-

Որովհետեւ բաւական ժամանակ անցաւ մինչեւ որ պաշտօնի մնայ, երկու-

ջայ նշանարեցի դէպի ինձ ընդհանուր ժամանակ միանգամայն [illegible] Գադուհոյն։

[illegible] ՐԴԸ։ — [illegible] ղութիւնք)։

Յուլիս 11 Դբի— [illegible] ղարձակ (Բ. Գասու)։ — Հայերէն

ՌՈՒՍԻԱ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ՝ Թիֆլիսի մէջ այս տարւոյ սկիզբէն ռուսերէն մի նոր թերթ սկսաւ հրատարակուիլ «Նովոյէ Ապպրենիէ» (Նոր Հանդէս) անուամբ, Ռուս երևելի փաստաբան Պ. Սոնէվանովի խմբագրութեամբ։ Ցիշեալ թերթը կարելի է համարել Կովկասի մէջ առաջին ռուսերէն հրատարակութիւնը որ բացարձակ ծրագիր ընդունած լինի հաւասարապէս պաշտպանել Կովկասի մէջ ամէն ժողովրդոց շահերն, առանց խտրութեան ցեղի և կրօնից։ Այդ թերթի համարներն ընդունեցանք և կը տեսնենք որ մանաւորապէս Հայոց վրայ ընդարձակ տեղեկութիւններ կը հաղորդէ։

«Ռուսքի Բուրիէր»ի 29դ. Թուոյն մէջ կը կարդանք հետեւեալը։

Բրակայ հրատարակող «Բօլիթիք» լրագրի Բեդրսպուրգի թղթակիցը կը դրէ որ՝ իշխան Տոնտուքով-Որսաքովի Բեդրսպուրգ գալու նպատակն է ցոյց տալ կառավարութեան այն դիւրին միջոցներն, որով կարելի կը լինի Կովկասի մէջ ընդհանուր զինուորագրութիւն կատարել։ Որա հետ մէկտեղ Պոհեմական թերթի թղթակիցը կը պնդէ թէ՝ Ռուսական կառավարութիւնը հաստատած է որ այս խնդիրն դժուար պիտի լուծուի և ծանր անպատեհութեանց պիտի հանդիպի Կովկասի ժողովրդոց մի մասին կողմէն։

Ուստի կառավարութիւնը որոշած է՝ նախ քան զինուորագրութեան գործին ձեռնամուխ լինելն զինաթափ ընել Կովկասի բոլոր ցեղերը, յորմէ եաքը պիտի ձեռնարկէ զինուորագրութեան, կազմելով քրիստոնեայներէն հեծելազօր։ Սորա հետ միասին նոյն թերթի թղթակիցը կը պնդէ թէ՝ պատերազմի ժամանակ, մանաւանդ երբ Ռուսիա իւր դէմը Թուրքիան ունենայ, այն ատեն Կովկասի թէ մահմէտական և թէ քրիստոնեայ գունդերը պիտի փոխադրուին Ռուսիոյ խորերը, ուստիր պիտի խրկուին Ռուսիոյ օգնիչ թշնամեաց դէմ։

Այլ և այլ նկատողութիւններու վրայ յենլով կրնանք հաւանական համարել Պոհեմական թղթակցի տուած տեղեկութիւններն, մանաւանդ վերջին մասերն։ Կը զարմանանք նաև թէ ինչպէս իշխան Տոնտուքով-Կորսաքով այսպիսի առաջարկութիւն կ'ընէ։ Կովկասի զանազան ազգերն Ռուսիոյ պատերազմներու ժամանակ ամէն ատեն կամաւոր գրուածներ տուած հազարներով և Կովկասի կառավարիչը, որ այս ամէնը լաւ գիտէ, կուզէ կասկածներ զարթուցանել Ռուսիոյ մէջ Կովկասու ազգաց հաւատարմութեան մասին։ Այս կասկածներու տարաբութեան ներքեւ հետամուտ կը լինի Ռուսիոյ խորերը ուղարկել տալ հազարաւոր երիտասարդներ։ Այդ երիտասարդները, մեծցած Կովկասու տաքուկ կլիմայի ներքեւ պիտի խրկուին Ռուսիոյ դառնալուն կլիմայից տակ ուր անպատճառ թոքամաղ կը լինին։ Միթէ օրինակն միշտ չե՞նք տեսնէր երբ կով, ասեան երիտասարդք կերթան, իրը ուսանող, Բեթերպուրգ, Մոսկուա, Խարգով, Խաղան։

«Նովոյէ Ապպրենիէ»ի 29դ. Թուոյն մէջ խմբագրական ագրու յօդուած մը հրատարակուած է, որով դաղափար կը յայտնէ թէ՝ Ռուսք պէտք չէ բնաւ հետամուտ լինին Յեւրոպա կատարուող այլ և այլ քաղաքական կարգադրութեանց, այլ աշխատելու են միշտ հաշտ երթալ եւրոպական մեծ պետութեանց հետ, և իրենց բոլոր ուշադրութիւնը նուիրել Պօլսոյ եւ Փոքր Ասիոյ մէջ իրենց առևտրական շահերու զարգացման, ամէն կերպ աջակցելով Թուրքիոյ բարոյական և նիւթական յառաջդիմութեան»։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ախալցխայէն Անուշեանց ստորագրութեամբ առ Ամեն. Ս. Պատրիարք Հայոց ուղղեալ նամակն, որ 7 միլիոն լիրայի ժառանգութեան խնդիր մը կ'յարուցանէ, և որոյ վերայ երէկ բաւական ծանօթութիւն հրատարակեցինք, Պատրիարքական Դեր. Փոխանորդ Հօր յանձնուեր է ի պարտուպատշաճ տնօրինութիւն։ Նորին Գերապատուութիւնը պիտի գրէ Ախալցխայի և կեղեցական իշխանութեան, որ մանրամասն ծանօթութիւն առնու յիշեալ Անուշեանցի վերայ, հրաւիրելով զնա՝ վաւերացուցնել տայ ստորագրութիւնը, ապահովի Պօլսոյ Պատրիարքարանի տուած խոստումն, և հաղորդէ Պատրիարքարանի։ Նորին Գերապատուութիւնը միւս կողմանէ պիտի յանձնարարէ Մանչէսթրի հոգեւոր Հովուին, որ ընէ իմանայ թէ արդարեւ ի Լոնտոն Անուշեանց անուն ազգային մը վախճանա՞ծ է, և թէ հուսկեալ կամ այլ քանակութեամբ գումար մը հարստութիւն թողա՞ծ է, և ո՞ր կը գտնուի։

Ակնայ Գաւառական ժողովն հերադրով շնորհակալութիւն յայտներ է ազգային կեդրոնական Վարչութեան, Սրուանձտեանց Դեր. Ե. Դարեգին վարդապետի հրաժարականը չընդունելուն համար, և ծանուցեր է թէ արդէն ինքն ալ ընդունած չէր։

Երուսաղէմայ պարտուց բարձման խնդրոյն համար Ազգ. ժողովէն կարգեալ յանձնաժողովն, որ ըստ որոշման ժողովոյն պիտի շարունակէ պաշտօնը, հրաւիրեալ է ինկատ դումարիլ առաջիկայ չորեքշաբթի օրը։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Եգիպտացի իշխանաց Զէյնէպ Հանում, իւր բարեգործական առատաձեռնութեամբ հանրածանօթ քսան ոսկի նուիրած է Միացեալ Ընկերութեանց պարահանդիսին առթիւ։

Կը լսենք թէ Վսեմ. Սուլթան փաշա Եգիպտոսէն 20 ոսկւոյ գումար մը նպաստ բերած է Միացեալ Ընկերութեանց։ Կը լսենք նաև թէ Բարձր. Ֆաթիմէ Սուլթանն ալ 20 ոսկի նը-ւիրեր է նոյն նպատակաւ։

Հաբէնէ լրագիրն՝ շաբաթական ըլլալով՝ ոկսաւ հրատարակուիլ երէկ։

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ
ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Միացեալ Ընկերութեանց տարեկան պարահանդէսն այս գիշեր կատարեալ յաջողութեամբ պսակեցաւ։ Բերայի Հայկական Նոր Թատրոնը գեղեցիկ ճաշակաւ զարդարուած և լուսաւորուած էր։ 800 տոմսակ ներկայացուած լինելով, կը հաշուուի թէ երկու սեռէ մինչեւ 1,300 անձինք ներկայ գտնուած են հանդիսին։ Ժամ 4½ին պարերն սկսան քաղցրանուագ երաժշտութեան մը առաջնորդութեամբ, և վերջացան այս առաւօտ ժամ 4 ին։ Բրնտանական դեսպան Լորտ Տըֆրին, որոյ հովանաւորութեան ներքեւ կազմուած էր հանդէսը, ժամ 3½ին թատրոնը մտաւ ընկերակցութեամբ իւր ազնուհի տիկնոջ, Դերմանական դեսպան Պ. տը Ռատովիցի, Սըր և տիկին Սանտիսնի և երկու դեսպանատանց ուրիշ անձի մը պաշտօնեայներով հանդերձ ընտանեօք։ Ասմ. Կայս. Պանքայի ընդհանուր անօրէն Պ. Ֆոսդըր ալ ի ընկերանար Անգլիական վսեմ. դեսպանին, որ երեկոյին ներկայ գտնուած էր մայրաքաղաքիս Իտալական դեսպան Քարդի կոմսին կողմէ տրուած մեծ հացկերոյթին մը պատիւ։ Լորտ և տիկին Ռամէրի, որք այս օրերս Կ. Պոլիս եկած և անգլիական դեսպանատունն հիւր եղած էին։

Դեսպանին դարասան ողջունեցաւ Անգլիացւոց ազգային երգով, «Տէր, փրկէ զԹագաւորն», զոր նը-ւագարանը հնչեցուցին, և ում յարմեկայս ունկնդրեցին դեսպանն և հանդիսականք, որք եռանդագին ծափահարութեամբ յայտնեցին իրենց ուրախութիւնը Վսեմ. դեսպանին այցելութեան համար։ Ն. Վսեմութիւն փոխադարձաբար իւր շնորհակալութիւնն յայտնեց, և պարերն, որք պահ մը դադրած էին, առաւել ոգեւորութեամբ վերսկսան։ Կարգադիր Պատ. մանանաւմն հարկ եղած հիւրասիրութիւնն ըրաւ Լորտ և տիկին Տըֆրինի, Դերմանական Վսեմ. դեսպանին, և անոնց ընկերակցող պատուարժան անձանց։

Թիւ յեսոյ, երեկոյեան լուսոյ քանի մը կանթեղներ միանգամայն լուսոյ ոլիէանի մը մէջ ընկղմեցին թատերասրահն, և առաւել կամ նուազ փոյթով մինչեւ առաւօտ վառեցան։ Այս միջոցիս, թատրոնին մեծ սրահը բաւական նեղ կուգար հարիւրաւոր պարողաց և պարուհեաց, մինչդեռ օթեակներն այնչափ լի չէին թուեր որչափ կարելի էր յուսալ, թէեւ ազգային բազմաթիւ պատուաւոր ընտանիքներ, զորս մի առ մի յիշել երկար կը լինի, դրաւած էին անոնց մեծագոյն մասն, և հանդէսին փայլը կ'աւելցնէին։ Իսկ թատերասրահը լեցուցող հանդիսականաց վրայ, մանաւանդ գեղեցիկ սեռի ներկայացուցչաց վրայ, որք ի հարկէ ամբողջովին դիմակաւոր էին, գոյնզգոյն զգեստներու և կերպարանքներու ճաշակն ու զանազանութիւնն անցեալ տարիներու չափ ճոխ էին։

Վսեմ. դեսպանը ժամ մը յետոյ մեկնեցաւ, և կէս գիշերէն ետքը, սրահին մէջ խռնեալ բազմութիւնը փոքր ինչ նուազելով, պարերն առաւել կանոնաւորութիւն ստացան, և պարողները մեծագոյն հաճոյքով մը վայելեցին այս երեկոյթին իրենց ընձեռած զբօսանքները։ Հիւրասէր ծարը երիտասարդք (Ֆոֆէրէ) ճշդիւ կատարեցին իրենց փափուկ պարտականութիւններն, և աչքի զարնող որ և է անկարգութիւն չպատահեցաւ։

Դալով հանդիսին նիւթական արդեանց, որք միակ խնդրելի բանը պէտք է լինին, ըստ հասոյթն հազար ոսկեն պակաս չհաշուուիր։ Այսպէս, 1884 տարւոյ Պարահանդէսը գերազանցած է իւր նախորդները թէ՝ փայլով և թէ տոմսաւորութեամբ, որ պատիւ կը բերէ Հայ ժողովրդեան կրթական զգացմանց և միանգամայն Կարգադիր Մասնախմբին անձնուէր ջանից։

Այս յաջողութիւն մասնաւորապէս ուշադրութեան արժանի կը համարիսանայ երբ յիշենք թէ վերջին մի քանի շաբաթներու միջոցին մեր Հայկական Թատրոնին մէջ դարձեալ ազգային նպատակներով ուրիշ երկու Պարահանդէսներ տրուած էին ոչ նուազ չքեղութեամբ։

Խմբագրութիւնս այս առթիւ պարտք կը համարի յատուկ շնորհակալութիւն յայտնել Անդր. Վսեմ. Դեսպանին, Օսմ. Կայս. Պանքային տնօրէն Պ. Ֆոսդրի և Կարգադիր յանձնախմբին տնտամոց, որք այս հանդիսին յաջողութիւնն ապահովելով, այնպիսի մեծ ծառայութիւն մը մատուցին Հայ ժողովրդեան։

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը հրատարակէ Ձեր պատուական լրագրոյն միջոցաւ յուսնուար ամսոյ նուիրատուագրայնոց անուանքը։

Մեծ. Տեարք

Ի Դամբէժ բնակեալ բարեսէր անձէ մը ձեռամբ Յովակիմ էֆ. Ֆէնէռճեանի 580. Հանգուցեալ բարեյիշատակ Գարագաշեան Յակոբ էֆէնտիի ազգիս ընտանեացը կողմանէ 540. Նիկոմիդիոյ եկեղեցւոյ մէջ շրջագայած պնակի հասոյթ՝ ձեռամբ տեղւոյն Դեր. Առաքնորդ Հօր 500. Գէորգ Մուրատեան 432. Անդրիանուպոլսոյ եկեղեցւոյ մէջ շրջագայած պնակի հասոյթ 410. ի Նիկոմիդիա Կամարական և ընկ. Ծխախտոյ գործարանի գործաւորներէ հաւաքեալ ձեռամբ Աբրահամեան Սահակ էֆէնտիի 361 դրչ. մի քանի բարեսէր անձերէ ձեռամբ Տիգրան Կիւմիւշիրեանի 273½ դրչ. Սամանթոյ Խնամատար պատ. Միութենէ ձեռամբ Կարապետեան Մեհրան էֆէնտիի 271 դրչ. հանգուցեալ Նիքօղէոս Նիկողոսյոս էֆ-ի հոգւոյն համար ձեռամբ Նիքօղէոս. Մեծ. եղբարց 108 դրչ. Յակոբ Մարտիկեան 54 դրչ. Մ. Կարապետ Տէր Կարապետեան 10 դրչ. Ազնուափայլ Տիկին Հռիփսիմէ Ս. Կիւլպէնկեան 1 ոչխար, 30 հօխայ բրինձ. Աղն. Տիկին Տօքթ. Նահապետեան 1 սրկիհի ծածկոց. Յարութիւն Գնաճեան 1 ոչխար. Ռօսսոմէոյի պատ. Թաղ. խորհուրդը ըստ իւր բարի սովորութեան տեղւոյն ազգայիններէն հաւաքելով բարեհաճեցաւ յուսարկել 63 հօխայ բակլա, 690 հօխայ սոխ, 8 հօխայ թարիճ (թարխանա). Կեսարացի Յակոբ Շաղեան, Սարգիս Ճորճեան և Մարտիրոս Զաքարեան և ընկ. 64 հօխայ Սմիսիոյ պամբեա. Սամանթացի Ենորոս մահտեսի Դէլորդ աղա 100 հատ փալտուտ ծուկ, 2 կրտով խեցիայ (միտեա). Սմիսիացի Յարութիւն Շիրմանեան 79 հօխայ ոսպ. Շապին քարահխարցի Անդրէաս Սիսակեան 15 հօխայ թուրմ բանիր. Ս. Ղ. Պարտիզպանեան 30 տէսթէ սիրուն թուղթ. «Արեւելք» օրագրոյ վարչական պատ. խորհուրդ 1 օրինակ «Արեւելք». Թոմաս Մինէճեան 1 օրինակ «Բուրատան մանկանց». Արամ Աշճեան 1 օրինակ «Ընտանիք» հանդէս։

Ի Դմնաց Հոգաբարձ. Ազգ. Հիւ.
Ատենադպիր Ատենապետ
Տէր. Կէ-Դ-ՀԷՐ Մէ. Ցաէ-ԷԵան
Կ. Պոլիս 1 փետր. 1884

Յ. Գ. Այս առթիւ պարտ անձին կը հաստատենք մեր խորին շնորհակալիքը յայտնել Սամանթիոյ Խնամատար պատուարժան Մխիթեան, որ տարիէ մը ի վեր մարդասիրաբար յանձն առած է օգնել հաստատութեանս՝ իւր անական նուիրատուութեամբն։ (Նոյն.)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ
ԱԶԳ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Պէշիքթաշի եկեղեցւոյ մնտուկին ելեւմտից հաշուեցուցակն որ 1883 յունուարէն սկսելով կը յանգի ցվերջ դեկտեմբերի նոյն տարւոյ,

Նոյնպէս, Գուրուչէշմէի հրաժարեալ Թաղ. խորհրդոյ պաշտօնավարութեան հաշուեցոյցն՝ որ 1883 մարտ 20էն սկսելով կը յանգի ցվերջ յունվարի 1884, ըստ օրինի Տնտես. խորհրդոյ ներկայացուած, և սոյն հաշուեցուցակաց յար և նման օրինակները Թաղ. խորհրդոյ յուղարկելով՝ հրահանգ տրուած է որ եկեղեցեաց բակը կախեն ի տես թաղեցւոյ։

Հետեւապէս, Տնտես. խորհուրդս այս պաշտօնական ծանուցմամբ կը հրաւիրէ դիմաղեցի ազգային, որ իրենց թաղի եկեղեցեաց վերաբերեալ հաշուեցուցակաց վրայ տրեալ է բոլոր կամ դիտողութիւն եթէ ունին, ներկայ ծանուցմանս թուականէն մինչև 21 օր պայմանաժամ փութան գրաւոր կերպիւ ներկայացնել Տնտեսական խորհրդոյ։

Սոյն պայմանաժամը լրանալէն յետոյ, ո՛ր և է բողոք կամ դիտողութիւն անլսելի պիտի մնայ։

8 Փետրուար 1884 (Ստ.)

Կ. Պոլիս

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Բնիկ Ակնեցի Գասապեան Պաղտասարի երեսուն և ութամենի, կարճահասակ, դիմագծի թխադոյն և սեւաչեայ որդի Մկրտիչ, որ տասն և չորս տարիներէ հետէ հայրենիքէն մեկնելով հետզհետէ դարձած է Պոլիս, Շամ, Մուսուլ ու Պաղտատ, վեց տարիներէ ի վեր խարտանցայտ եղած է և չգիտցուիր ո՛ւր, ողջ կամ մեռեալ լինելն. ուստի Ազգային Պատրիարքարանն կը յանձնարարէ Արգոյ Ազգայնոց, որ, եթէ երբէք յիշեալ Մկրտիչի մասին որ և է տեղեկութիւն ունին, բարեհաճին մինչև յ'երեք ամիս խնդացնել Պատրիարքարանի ի գիտութիւն։

8 փետր. 1884

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուիրնէի կուսակալ կարգեցաւ՝ Պրուսայի նախորդ կուսակալ Հաճի Իզզէթ փաշա։ Այսօր կուգեւորի ի պաշտօնատեղին։

Խայրէտտին փաշա՝ որ քանի մ'օրէ հետէ հիւանդ էր, ապաքիներ է։

Պարսկական դեսպանն երէկ Բ. Դուռն երթալով՝ մեծ եպարգոսին հետ տեսնուեցաւ։

Դատականնախարարութիւնն խմբագրով, որ Կէյպիզէի բանտարկեալք կհարստահարուին ոստիկանութեան գործակալներէ, Իսկիւտարի ընդհանուր դատախազ Մէհմէտ էֆէնտին ղրկեր է քննութեան համար։

Աւստրիական դեսպանն երէկ առաւօտ Վարնայի շոգենաւով մայրաքաղաքս հասաւ, և դեսպանականք և այլք ընդ առաջ գացին շոգենաւը։

Թէհրանի Իրան անուն լրագիրն կը ծանուցանէ, թէ հուչակաւոր Շեյխ Ուպէյտուլլահի մահուանէն հետէ պարսկական Քրդաստանի կողմերը կատարեալ խաղաղութիւն կը տիրէ, և քուրդք իրենց գործերովը կզբաղին հանդարտութեամբ։

Կիւմիւշխանէի կողմերը (Տրապիզոնի նահանգ) անասնոց հիւանդութիւն երևան ելեր է այս օրերս, և ի սկզբան մեծ կոտորած ըներ է, սակայն այժմ նոյն վիճակին մէջ չգտնուիր։

Գաւառական լրագրերէ կիմացուի, թէ Բ. Դուռը նահանգային իշխանութեանց ըրած մէկ մէկ պաշտօնական կարգեր է՝ Ռուսիոյ պատերազմական հարկին յատկացեալ հէվալէներուն վճարման հսկելու համար։

Ծանուցած ենք արդէն թէ Մէսաժբրի ընկերութեան Տ՚Ոյէ շոգենաւն անգլիական Քրէսէնտ շոգենաւուն բաղխելով Արշիպեղագոսին մէջ, ընկղմած է ցայտ։ Անգլիական շոգենաւուն տերերը ֆրանսական ընկերութեան դէմ դատ բացած են Լոնտոնի ծովային դատարանաց առջեւ, 25,000 անգլիական ոսկւոյ փոխարինութիւն պահանջելով։ Բայց Մէսաժբրի ընկերութիւնն այդ դատարանները չճանչնալով, չէ պատասխանած առ ինքն ուղղեալ կոչնագրին։

Արտաքին գործոց դիւանատունն այս օրերս դրաված էր օրինակները պատրաստելու Եգիպտական գործոց նկատմամբ վերջերս խմբագրուած բոլոր պաշտօնագրոց։ Այս պատճէնք կայսերական պալատան դիւանատունը ղրկուեցան ըստ հրամանի Ն. Կ. Վսեմութեան, որ կուզէր անձնապէս սերտել զանոնք։

Վախճանեալ Բեռնի փաշայի որդի Բիֆաթ պէյ, որ երբեմն Խոտիին քաղաքական դիւանատան տնօրէն եղած էր, Բէյթի ընկերութեան Գոնեայի գործակալ կարգեցաւ։

Բ. Դրան և Շեյխ-Իսլամ-Իսլամի պաշտօնական Օգոստոսի ամսականն այս չորեքշաբթի վճարուեցաւ։

Իզմիրի լրագիրք կը ծանուցանեն թէ նահանգին այս տարւոյ բամպակի հունձքը կը հաշուի 50,000 հակ, յորմէ ցարդ 20,000 ը միայն հասած է Իզմիրի հրապարակը։

Էյ-Էրէս կ'իմանայ թէ Անգլիա ընդունած լինելով մաքսատոց յաւելման սկզբունքը, Բ. Դուռն ալ պիտի հաւանի լորտ Տըֆրինի առաջարկին, որ կը պահանջէր անգլիական վաճառաց նկատմամբ ի գործ դնել՝ «ամենէն աւելի նպաստաւորեալ» տէրութեան դրութիւնն, և չարունակել 100 ին 8 մաքս առնլու «վաճառաց արժէքի վրայ»։

Կը հաւատան այն լուրը, թէ Ե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

11

ՄՍՐԱՑՈՐԵԱՆ — (ՄԱԻՍ)

ՄՍՐԱՑՈՐԵՆԻ ՀԱՏԵՐԸ ԹԱՓԵԼ, ՈՒ ՀԱՄԲԱՐԵԼ

Մսրացորենի հատերը պէտք չէ թափել իրենց հասկէն՝ մինչեւ մէջի կոճը բոլորովին չորցած չըլլայ։ Եւ զի կոճը երկայն ատեն կը պահէ թացութիւնը, նմանապէս հատիկներուն պզտիկ կոթը, որով խղկին մէջ կապեալ են՝ աւելի ուշ կը չորնան, հարկ կըլլայ ուրեմն սովորական պէտքի ժամանակ պտուղներն արեւու մէջ տարածել երկու երեք օր՝ ատեն ատեն շրջելով, որպէս զի չորնան ու դիւրաթափելի ըլլան։

Մսրահատը թափելու համար երբեք սովորական կայ։ Նրանելով, ձաղելով և մեքենաշարժ գործիով։ Նբրանել ըսածս այն է որ, խոհանոցի մեծկակ դանակ մը հատ փայտի ուժով կը զարնեն իբր թէ կտրել ուզելու կերպով, որով դանակը խորկէկ կը խրի հոն ու կը գամի հատատ։ Այս դանակի կոնակին վրայ պտղի հասկերը մի մի քերեն բռնութեամբ, որով հատերն ամեն կը խախտին ու կը թափին։ Այս կերպով հատերը թափելը պզտի ագարակներու մէջ կը գործածուի, զի սակաւ գործ կ'ելլէ։ Բայց այն հատերն որ ունդի պիտի պահուին, այս կերպով թափելն աղէկ է, զի չեն չարչարուիր, անարատ կը մնան և իրենց փոքր կոթերով ողջիկ կ'ելլեն։

Երկու հատ բիր մէկ ու կէս կանգուն երկայնութեամբ, որ նոյնչափ չուանի մը երկու ծայրերուն կապուած են իրենց մէկ ծայրով, է ձաղանք գործին։ Փայտին մէկը ձեռքի բռնելիք կըլլայ, մէկալը հարիչ։ Երբ պէտք ըլլայ ասով հատերը թափել, քարայատակի կամ պնդացած չոր գետնի վրայ մարապուղքն տարածելէ ետքը՝ երեք չորս մշակ մի մի ձաղանք առած, այսինքն փայտին մէկը բռնած միւս փայտը բարձրէն իջեցուցնելով՝ պտղոց ուժով զարնել, այնչափ անգամ որ հատերը բոլանդակ թափին։

Այն որ ձաղելով պիտի թափուին հատերը, քարայատակ կալատեղէայ վրայ պտուղն տարածելով չորցուցնելէ ետքը պէտք է քամէքով ժողովել մի թիզ բարձրութեամբ ու ձաղանքով ծեծել։ —Մինչդեռ զարնողները յաջորդաբար և անընդհատաբար կիջեցուցնեն ձաղանքն և հատերը կը թափին, միւս կողմանէ կանայք թափած կոճերը մէկդի կ'առնուն երկայնակոթ ակիշով։ և այլ կանայք կոճերը մի մի ձեռքէ կ'անցուցնեն; և վրիպած հատեր՝ եթէ դաւէն՝ կը թափեն։ Ձաղելն ուարտելուն պէս հատերն կը մաքրեն մաղելով և կամ հողմի դէմ հոսելով։ Իսկ կոճերն ի բաց կը դնեն և կալեր կը կերցուցնեն։

Մսրացորենը հատիչ մեքենայով հատկէ թափելը Ամերիկայի դիւտ է։ որ մեքենայն այժմ շատ աւելի կատարելագործած է, և մեծ ագարակներու համար տեմենապիտանի գործի։ զի մէկ ժամու մէջ երեք հարիւր լիթրէ աւելի հատ կը քաղէ, և զի հատերն կ'ելլեն անարատ։

Երկու հոգի է վարող այս մեքենայն, մին կը դարձնէ, միւսը հատկերը մի մի մեքենայի կուտայ։ սա ատամնաւոր ըլլալով գործի, մէկ վայրկենի մէջ հատերը կը քանդէ մէկդի կը հաւաքէ և մէջի կոճը կը թողու մերկ և բոկ։ Միայն, հատերն ալ քանի մը անգամ կերն ելլալու են կարի չոր, որպէս զի դիւրաթափ ելլան։

Մսրացորենը լաւ պահուելու համար աղէկ է որ հատերը չթափած հատով պահուին։ բայց այս բանս դժուար է ընդարձակ մշակութեան մէջ, զի շատ տեղ կը բռնէ, և ամեն ատեն դիւրին չէ բաւական տեղ գտնել։ —Այն որ ձաղելով մաքրեցայով կամ ո՛ր և է կերպով հատիկ եղած է, պէտք է յարեւու տարածել, և ատեն ատեն փայտէ թիակով կամ սանտրով շարժել, որպէս զի աւելորդ թացութիւն եթէ ունի՝ երթայ։ յետոյ կրել ի չոր և հովատուն մարագ և տախտակամած գետնի վերայ տարածել իբր 15 մեդրատատ բարձրութեամբ։ Ուր երկու երեք օրը հեղ մը պէտք է շարժել, և յառաջ քաշելով տեղափոխել, որպէս զի չտաքնայ։ Երբ հաւատի է համարելու թէ մարահատ չորցած են բոլորովին, կրնայ նոյն մարագին մէջ բարձր կուտել, կամ պարկերու մէջ առանձնացուցնել, և կամ՝ ի չտեմարան կրել — Ոմանք գետնափոր չոր դուրերու մէջ կը պահեն ըստ օրինակի ցորենոյ։

Համարած մսրացորեանը կրնայ երբեմն ոջլոտիլ։ Այս բանս տեսնուածին պէս պէտք է հանել ու հոսել։ —Եթէ երբէք կոյտերու կամ պարկերու մէջ մուգի հոտ սկսի, ջերմնալու սկզբնաւորութիւն ըլլալով այն, պէտք է իսկոյն շարժել և հողմահարել։

ՄՍՐԱՐՈՑՍԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ ՈՒ ԹՇՆԱՄԻՔ

Մսրաբոյսը մի միայն հիւանդութիւն ունի, այն է ՝ՃՃ-Ե (շառպօն) ըսուածը։ —Ածուխէ զարնուած մրոտոտի վրայ, հասկի կոթին մօտ՝ և տերեւի կցուածին վրայ կը գոյանայ պալար մը գոյնը աղիւսի նման սպիտակ, որ երթալով կը մեծնայ՝ մինչև ձեռքի մեծութեան կը հասնի, և ձեռն կըլլայ անճոռնի։ իսկ մէջը լեցուն կ'ելլայ սեւ հիւթով մը, որ քիչ քիչ կը դառնայ ի բորբոսային սեւ փոշի։ Եւ երբեմն այնչափ կը մեծնայ այս ժահատիպ պալարը որ մինչեւ քոմի կեցող մսրացորենի հասկը իւր մէջ կ'ընկղմէ, և կամ իւր ախոռ անոր ալ կ'անցունէ։ — Եւ երբ այս պալարը հասունանայ, չդիտեմ ինչպիսի հասունութիւն է, կը ճաթի, մէջի փոշին դուրս կը ցրուի, և մերձակայ մրատունկերու վրայ իյնալով զանոնք ալ կ'ախտաւորէ։

Այս ախտէ զարնուած մրատունկին հասկերը չատ խեղճ կը մնան, հատերն ալ վտիտ ու վատառողջ։

Այս հիւանդութիւնը կը տեսնուի առաւել թաց գետիններու վրայ և ստուերոտ տեղանք մնակուած բուսոց վրայ։ Եւ թուի թէ լուսեաց ազդն ալ բլլայ այս բանիս կոր մը նպաստաւոր։

Երբ հիւանդութիւնը արտն առ հասարակ ճարակած է, ածուխի հիւանդութեամբ պէտք է սերմը փոխել, և հիւանդոտներէն քնաւ սերմ չառնուլ։

Մինչեւ հիմա գտուած չէ այս հիւանդութեան դեղ կամ նախազգուշանք։ Կարծեն ոմանք որ ունդը յառաջ քան զերմանել կրտսելով՝ ըստ օրինակի սերմանց ցորենոյ՝ կըրնայ հիւանդութեան առաջը առնուիլ։ բայց այլ և այլ փորձեր այս բանի ստուգութիւն մը չտուին։

Որպէս զի այս հիւանդութիւնը յաջորդ տարուան սերմանեաց ալ չփոխադրուի, պէտք է որ մշակը արտին վրայէն քաղելով տունկերը մի մի աչքէ անցունէ։ եթէ կան ոմանք որ պալարի ծայր ցուցած են, զանոնք ջնջէ՝ ի բաց կորելով սուր դանակաւ, և քաղուած մասունքն տանի արտէ դուրս հեռու տեղ մը ու անհետ ընէ։

(Շարունակեմ)

դիպասի իշխանութիւնը 65 միլիոն ֆրանկ վոխ առած է Գ. Բոշիլաէն։

—

Զէթինէի նորընտիր դեսպան գընդապետ Ճէվատ պէյ՝ երէկ Բ. Դուռը երթալով տեմնուեցաւ արտաքին գործոց նախարարի խորհրդական Տատեան էֆէնտիի հետ։

—

Գումգափուի երկաթուղոյ կայարանին պահապանն երէկ շոգեկառաց անցնելու ժամանակն տեսնելով, որ ճամբուն վրայ փոքրիկ տղայ մը կիսաղայ, կաճապարէ ճողոպրել անտի. սակայն այս պահուն շոգեկառքը սրանալով՝ պահապանին գլուխը կլանչախէ և խեղճը կմեռնի։

—

Գահիրէէն փետր. 18 թուով կը հեռագրեն.

«Կորտոն փաշայի ստորագրութեամբ երէկ յայտարարութիւններ փակցուեցան ի Խարդում, որոցմով Մէհտին «Քորտոֆանի Սուլթան» կը հռչակուի, և կը ծանուցուի թէ Կորտոն փաշա Սուտանի մէջ դերեցաւ. առեւտուրը չպիտի արգիլէ (՞.՞)։

—

Անցեալ շաբաթ օրը Եէնի-դափուի նաւավարներէն Մէհմէտ Գաոը գիւղ փոխադրելու համար երկու մարմարիոն առեր մեկներ է, այն օրէն հետէ երեւան ելած չէ։ Կպատմուի թէ Մէհմէտ իւր բեռն Գաոը գիւղի նաւահանգիստն հանելէն ետքը, երբ հաղարապետի մը սպասաւորն առած ճանբայ ելնելու վրայ է եղեր, նաւահանգստին բեռնակրաց պետն Թաղապետական օրինաց հակառակ 5։15 ֆրանքը անունով տուրք մը պահանջեր, և նորա ընդդիմութեան վրայ պահեստի թիակն յափշակեր է. իսկ նաւավարն թողլով՝ ճանբայ ելեր, և բուքի հանդիպելով անյայտ եղեր է, և մինչեւ ցարդ իմացուած չէ խեղճերուն ի՛նչ ըլլալը։

—

Թրիէսթի թղթաբեր շոգենաւն այս գիշեր ժամը երեքին անցաւ Տարտանէլէն։

—

Մանչեսթր Օրէնդրոյ կ'ըսէ թէ նախարարութեան մէջ մասնական փոփոխմանց վերաբերեալ զրոյցներ նորէն կը շրջին, և կը կարծուի թէ երկու նախարարներ ուրիշ կարեւոր պաշտօններու պիտի կոչուին, բայց դեռ ստոյգ լուր չկայ։

—

Վաշինկթոն խափանեալ լրագրոյ արտօնատէր Ֆիլիք էֆէնտի Վէհ. Սուլթանին աղերսագիր մը ներկայած և ներում խնդրած լինելով, կը լսենք թէ Վէհ. Սուլթանն հրաման բրած է յիշեալ թերթի վերահրատարակման։

—

Ներքին գործոց նախարարութեան կողմէ գաւառական իշխանութեանց ղրկուած շրջաբերական մը անոնց կը պատուիրէ աղդարարել այն Օսմ. հպատակաց որք գործով Պուլկարիա կ'երթան, որպէս զի իրենց անցագրերը միշտ ի կարգի լինին, և պայմանաժամը լրացած անցագրերով չճամբորդեն. որովհետեւ Պուլկարական իշխանութիւնք Օսմ. հպատակ կը նկատեն այն ամէն Օսմ. հպատակներն որք կանոնաւոր անցագրեր չունին, և հետեւապէս զինուորական ծառայութեան և Պուլկարական հպատակներու այլ պարտականութեանց կ'ենթարկեն զանոնք։

—

Գրրդ Քիլիսէի երկրաչափ Պ. Շարլ Իվանովսքի արտօնութիւն խնդրեր է՝ Պապաէսքիէն Գրրդ Քիլիսէ ածան երկաթուղի մը շինելու։

—

Արտաքին գործոց նախարար Արիֆի փաշա բոլորովին առողջացած լինելով՝ կիւրակէ օրը ներկայ պիտի գտնուի նախարարաց ժողովոյն։

—

Զրոյց կայ թէ Աւստրիոյ դահաժառանգ իշխանը 10–12 օրէն մայրաքաղաքս կուգայ։

—

Գէշիկթաշի կողմերն այս օրերս տեղի ունեցած գողութեանց վրայ, ոստիկանութիւնը խուզարկութեան եղած ըլլալով, և կասկածի ենթարկուելով Լազարի անուն Հելլենացի մը, որ արդէն քանիցս դատապարտեալ է եղեր, երբ ուզեր են ձերբակալել զինքը, ի զէն դիմեր է. սակայն չէ յաջողեր և ոստիկանութեան ձեռքն անցեր է։

—

Ինչպէս արդէն ծանուցուեր էր, շաբթուս մէջ սկսաւ գործադրուիլ Պալեան Սարգիս պէյի դէմ ի բացակայութեան տրուած դատավճռոյն գործադրութիւնն, որուն համեմատ այդ ճարտարապետին բոլոր կալուածներն յաջքունիս գրաւեալ են։

ՕՏԷՄԱՑԻ ԵՐԷԿԻ ԹՂԹԱԲԵՐԸ

